

ՆՈՐՈԹԻՒՆՆԵՐ ՌՈՒՍԱՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Չեխովի՝ «Три Сестры» — Գորկիի՝ «Мещане».

Ժամանակակից ռուսաց գրականութեան մէջ Լ. Տոլստոյի յետոյ ամենաժողովրդական գրողներն են Ա. Չեխով և Մ. Գորկիյ։ Ոչ միայն ռուս ընթերցող հասարակութիւնը, այլ և քաղաքակիրթ աշխարհը հետաքրքրութեամբ է հետևում դրանց ամեն մի ստեղծագործութեան։

Միայն վէպիկներն ու պատմութիւնները չեն դրանց գրչի բաժինը կազմում։ Չեխով վաղուց յայտնի է նաև իր թատերական գրուածքներով։ յայտնի են նրա „Медведь“, „Предложение“, „Чайка“, „Дядя Ваня“, բայց ամենից աւելի հետաքրքրութիւն չարժեքի նրա վերջին դրաման — „Три сестры“ (երեք քոյրեր), որը լոյս տեսաւ անցեալ տարի։

Գորկին էլ այս տարուայ սկզբում առաջին անգամ փորձեց իր ոյժերը դրամայի մէջ։ Նրա „Мещане“ (Քաղքենիներ) դրաման այժմ դնում է եւրոպական մայրաքաղաքներում։

Մենք կաշխատենք մեր ընթերցողներին ծանօթացնել ռուսաց գրականութեան այդ երկու նորութիւնների հետ. մանաւանդ որ հայոց բնւի վրայ, ինչպէս երեւում է, դեռ շուտ չեն գնուի այդ պիէսները։

Քուրժուական միջնորդութիւն է վերցրած «երեք քոյրերի» սիւժետը։ Գործողութիւնը տեղի է ունենում նահանգական քաղաքում։ Այդտեղ ապրում են երեք քոյրերը՝ Օլգա, Մաշա և Իրինա Պրոզորովները իրանց եղբոր Անդրէյ Սերգէյիչի հետ։ Տաղտկալի է կեանքը, մասլ ու միակողմանի լինչո՛ւ, արդեօք, ասում է Անդրէյը, դեռ կեանքի սկզբում մենք դառնում ենք այսպէս ձանձրալի, անհետաքրքիր, ծոյլ, անտարբեր, անօգուտ, անբաղդ... Արդէն երկու հարիւր տարի է, որ գոյութիւն ունի

մեր քաղաքը, նրա մէջ հարիւր հազար բնակիչ կայ, բայց բոլորն էլ իրար նման Չը կայ ոչ մի հերոս ոչ անցեալում և ոչ ներկայումս։ Չը կայ ոչ մի գիտնական, ոչ մի նկարիչ, ոչ մի շատ ու քիչ յայտնի մարդ, որ զարթեցնէր նախանձ ու նամանուելու ջերմ ցանկութիւն։ Միայն ուտում, խմում, քնում են և յետոյ մոռնում... Մնում են ուրիշները և դարձեալ ուտում, խմում, քնում և, որպէս զի ձանձրոյթից չը բթանան, իրանց կեանքը բազմակողմանի են դարձնում կեղտոտ բամբասանքով, օղիով, թղթախաղով ու խորամանկութեամբ...։

Ի՞նչ բաւականութիւն պիտի ստանային երեք քոյրերը. այդպիսի միջավայրում, մանաւանդ որ նրանց հոգեկան աշխարհն էլ ծածկուած էր սեւ-սեւ ամպերով, նրանց սիրտն էլ լցուած էր վիշտ ու թախիծով։ Կեանքը ծանր բեռի նման ճնշւում է նրանց։ Մաշան ամուսնացած է գիմնազիայի ուսուցիչ՝ Կուլիզինի հետ, բայց չի սիրում նրան։ «Ինձ ամուսնացրին, ասում է նա, երբ ես դեռ տասնութը տարեկան էի։ Ես վախեղում էի իմ ամուսնույց, որովհետեւ նա ուսուցիչ էր, իսկ ես դեռ նոր էի վերջացրել ուսումս։ Այն ժամանակ նա իմ աչքին երեւում էր չափազանց գիտուն, խելացի ու երեւելի։ Իսկ այժմ, դժբաղդաբար, այն չէ... Եւ այդպէս հրապարակուած սիրտը նոր կեանք է որոնում, նոր սէր է ուզում...։

Սիրոյ, կամ աւելի ճիշտն ասած փեսայացուների համար հալ ու մաշ են լինում նաեւ միւս քոյրերը—Օլգան և Իրինան։ Հասակն առած օրիորդներ են երկուսն էլ, մէկը վարժուհի, իսկ միւսը հեռադրատան ծառայող։

Աշխատում են նրանք, բայց աշխատանքը սփոփանք չի տալիս մաշուած սրտերին։ Նրանց համար միայն մի իդէալ դոյութիւն ունի—ամուսնութիւն, բայց դա էլ անմահական խընձորի նման ձեռք չի ընկնում։ Միմեանց յետեւից անցնում են օրեր, ամիսներ ու տարիներ, իսկ փեսայացուները չը կան ու չը կան։ Կեանքն աւելի ու աւելի անտանելի է դառնում։ Ի՞նչ անել...

—Թողնել անիծուած քաղաքը. տեղափոխուել Մոսկուա. Մոսկուա, Մոսկուա...

Մոսկուան դառնում է աւետեաց երկիր քոյրերի համար։ Գոյրերից պակաս ձանձրոյթ չի զգում Անդրէյը, նա իբր թէ սիրում է Նատալիային և վերջը ամուսնանում հետը, բայց շուտով ամուսնական կեանքն էլ տաղտկալի է դառնում նրա համար։ «Ինձ հարկաւոր է մէկի հետ խօսել, ասում է նա, իսկ կինս ինձ չի հասկանում, քոյրերիցս էլ վախենում եմ։ Վախենում եմ, թէ ինձ կը ծաղրեն, կ'ամաչեցնեն... Ես չեմ խմում,

արակտիրներ չեմ սիրում, բայց ինչպիսի բաւականութեամբ
կը նստէի Մոսկուայում—«ТВОЮ»-ի՝ մօտ... Նստում ես բեռ-
տորանի ահագին դահլիճում, բայց այնուամենայնիւ քեզ օտար
չեա զգում։ Իսկ այստեղ դու բոլորին ճանաչում ես, բոլորը քեզ
են ճանաչում, սակայն օտար ես, օտար... Օտար ես և միայ-
նակ։ Այդպիսի գրութիւնից ստիպուած Անդրէյը գերի է դառ-
նում թղթախաղին։ Խաղում է անվերջ, պարտքեր է անում,
գրաւ է դնում և տանուլ տալիս։ Իսկ կի՛նը—նատաշան։ Նա էլ
կամայ-կամաց սիրաբանութիւններ է սկսում ուրիշի հետ։

Այդպէս մնայլ է Պրօգօրովներ ի կեանքը։ Բայց ահա գալիս
է զօրքը. քաղաքը քիչ կենդանանում է։ Սակւում են ծանո-
թութիւններ, երթեւեկութիւններ և դրանց հետեւանք՝ սիրա-
բանութիւններ։ Մալյուկեան մէջ լոյս են ընկնում յուսոյ ճա-
ճանչներ, անուրջներ ու յոյզեր։ Ամենից առաջ սիրահարում է
Մաչան։ Նա սիրում է ենթադնգապեա Վերչինինին—«Ես ուզում
եմ միղքս խոստովանել, ասում է նա իր քոյրերին, կը խոստո-
վանեմ ձեզ և այլ եւս ոչ ոքի, երբէք... Կասեմ այս բոպէին։
Այդ իմ գաղտնիքն է, բայց դուք պիտի բոլորն իմանաք... Չեմ
կարող լռել... Ես սիրում եմ, սիրում եմ... Սիրում եմ Վերչի-
նինին... Այո, սիրում է Մաչան և այն առանց խղճի խայթոցի,
առանց ամուսնուց քաշուելու։ Վերչինինն էլ փոխադարձ զգաց-
մունք է տածում դէպի նա—«Ես սիրում եմ, յուզուած բացա-
կանում է նա Սիրում եմ ձեր աչքերը, ձեր շարժումները...
Օ՛հ, հիանալի, հրաշալի կին»... Եւ այդպէս երջանիկ օրեր է
անցկացնում սիրահար զոյգը, մինչեւ որ հասնում է անջատման
ժամը։

Իրինան էլ դառնում է սիրոյ առարկայ։ Նրա վրայ միան-
գամից երկու զինուորականներ են սիրահարւում—չտաքս կա-
պիտան Սալեօնին և կոմս Տուգենբախը։ Երկուսն էլ խոստովա-
նում են իրանց սէրը ամենավառ գոյներով, ամենանուրբ դար-
ձուածքներով։ Սակայն Իրինան աւելի հակուած է դէպի կոմսը,
թէեւ նրան էլ չի սիրում։ Բայց ի՛նչ փոյթ։ Չէ որ կարելի է
առանց սիրոյ էլ ամուսնանալ։ Ահա թէ այդ մասին Իրինային
ինչ խորհուրդ է տալիս մեծ քոյրը—Օլգան։ «Սիրելիս, ասում
եմ քեզ իբրեւ քոյր, իբրեւ բարեկամ, եթէ ուզում ես իմ խոր-
հուրդը, ամուսնացիր կոմսի հետ։ Չէ որ դու նրան յարգում
ես, բարձր ես դնահատում... Նա, ճշմարիտ է, տգեղ է, բայց
կարգին մարդ է, մաքուր... Չէ որ ամուսնանում են ոչ թէ սիրոյ,
այլ պարզը կատարելու համար։ Գոնէ ես այդպէս եմ կար-
ծում և ես կամուսնանայի առանց սիրոյ։ Ով որ ինձ առաջար-

կութիւն անէր, միեւնոյն է, կ'ընդունէի, միայն թէ նա կարգին մարդ լինէր... Նոյն-իսկ ծերունու հետ կամուսնանայի...

—Այո, համաձայն եմ, պատասխանում է Իրինան, կամուսնանամ նրա հետ, միայն թէ գնանք Մոսկուա՝ Մոսկուայից լաւ բան չը կայ աշխարհումս. գնանք, Օլեա, գնանք...

Ահա թէ ինչ աստիճանի է հասել ամուսնանալու տենչն ու կեանքի ձանձրոյթը։ Սակայն «առանց սիրոյ» ամուսնութիւնն էլ վիճակուած չէր Իրինային։ Երկու ախոյեանները—Սալեօնիի և Տուզենբախի—մէջ մենամարտութիւն է տեղի ունենում և վերջինս կորցնում է իր կեանքը... Այդպիսով ամուսնատենչ օրիորդը դարձեալ մնում է սպասելու և տանջուելու։

Բայց այդ դեռ բոլորը չէ։ Առաջին հարուածին հետեւում է երկրորդը։ Շուտով բոլոր զինուորականները ընդմիջտ հեռանում են քաղաքից և կեանքը նորից ընդունում ու իր սովորական հոսանքը—տաղտկալի ելեւեջներով։

Այդ բոլորից յետոյ, ինչպէս իրաւացի կերպով նկատում է ֆրանսիացի քննադատ Վօզիւէ—(„Revue des deux mondes“ 1902, janvier), պէտք էր սպասել, թէ քոյրերը աւելի պիտի տխրեն ու հիասթափուին։ Բայց այդպէս չի անում Չելսովը, նա ընդհակառակը վերջին րոպէում մի առանձին յոյս ու ոգեւորութիւն է ներշնչում իր հերոսուհիներին, որոնք իրար յետեւից բացականչում են, թէ պէտք է ապրել, ապրել ու աշխատել...

Մտաւ.—Նրանք հեռանում են մեզանից... Մենք կը մնանք մենակ, որպէս զի նորից մեր կեանքն սկսեց... Պէտք է ապրել... Պէտք է ապրել...

Իրինա.—(Գլուխը Օլգայի կրծքին դնելով)—Իր գալ ժամանակ, երբ բոլորը կ'իմանան, թէ ինչու համար էր այդ բոլորը, ինչու համար էին այդ տանջանքները. ոչ մի գաղտնիք չի մնալ, իսկ այժմ հարկաւոր է ապրել... Հարկաւոր է աշխատել, միայն աշխատել։ Վաղը ես մենակ կը գնամ, դաս կ'աւանդեմ դպրոցում և իմ ամբողջ կեանքը կը տամ նրանց, որոնց նա, գուցէ, հարկաւոր է։ Հիմա աշուն է, շուտով կը գալ ձմեռը, ամեն ինչ կը ծածկէ ձիւնով, իսկ ես կ'աշխատեմ, կ'աշխատեմ...

Օլգա.—(զրկում է երկու քոյրերին)—Ո՛հ, Աստուած իմ, կանգնի ժամանակ և մենք բոլորս էլ էր գնանք լաիտնականութեան գիրկը... Մեզ կը մոռանան։ Իր մոռանան մեր դէմքերը, ձայները, մեր թիւը, բայց մեր տանջանքները ուրախութիւն կը դառնան մեզանից լեռոյ ապրողների համար։ Երջանկութիւն և խաղալութիւն կը սկսուի աշխարհում։ Այն ժամանակ բարի խօսքով կը լիչեն և կը օրհնեն նրանց, որոնք ապրում են այժմ։ Օ՛հ, սիրելի քոյրեր, մեր կեանքը դեռ չէ վերջացել։ Ապրե՛նք։ Մի քիչ էլ և այն ժամանակ մենք կ'իմանանք, թէ ինչու համար ենք ապրում, ինչու համար ենք տանջւում... Եթէ իմանայինք, եթէ իմանայինք...

Դրանով վերջանում է դրաման։

Դառնա՛նք այժմ Գօրկիի «Мещане» դրամային:

Մեշյանական ընտանիքի կեանքն է կազմում այն կանուան, որի վրայ հիւսուած է դրամայի ամբողջ բովանդակութիւնը: Մտողների և զաւակների ընդհարումն է այն ներքին ոյժը, որի շուրջը կառարուում է գործողութիւնը:

Դրամայի հերոսներն են Բեզսեմենով ամուսինները և նրանց զաւակները՝ Պետրն ու Տատիանան: Բեզսեմենովը հասակն առած և ունեւոր մարդ է—մէկը նրանցից, որոնք ներկայ կապիտալիզմի ազդեցութեան տակ համարձակ քայլերով առաջն ընթանում, հարստութիւն են հաւաքում՝ առանց խտրութիւն դնելու միջոցների մէջ, առանց ճնշուելու մեղքից ու խաբեքայութիւնից: «Դու ինձ դուր ես դալիս, ասում է գործող անձերից մէկը—Տետերեվը—Բեզսեմենովին, որովհետեւ դու չափաւոր խելացի ես և չափաւոր յիմար, չափաւոր բարի ես և չափաւոր չար. չափաւոր ազնիւ ես և ստոր, վախկոտ և քաջ... Դու օրինակելի քաղաքացի ես: Դու լիովին իւրացրել ես դատարկութիւնն ու դաժնութիւնը—այն ոյժը, որ յաղթում է նոյն իսկ հերոսներին և ապրում է. ապրում է և փառաւորումս:

Սակայն բոլորովին այլ տիպեր են ներկայացնում այդ «օրինակելի քաղքենու» զաւակները՝ Տատիանան և Պետրը: Ժամանակակից մտաւոր հոսանքներն ու հասարակական կեանքը դրոշմել են նրանց վրայ իրանց կնիքը: Նրանք իրանց հոգեկան աշխարհով, իրանց ձգտումներով ու համոզմունքներով տարբերւում են ծնողներից: Ահա հէնց այդ տարբերութիւնն էլ դառնում է ընտանեկան գժտութեան հիմնաքարը: Զաւակները դժգոհ են ծնողներից, իսկ ծնողները—զաւակներից, նրանց վարքից ու կենցաղից:—«Ի՞նչ է ձեր նպատակը, բացականչում է Բեզսեմենովը, հառաչող Տատիանային տեսնելով. մեր կարգերը ձեզ դուր չեն գալիս, այդ մենք տեսնում ենք, զգում ենք... Բայց, որն է ձեր մտածած կարգը... Ահա հարցը:—Անխիղճներ, բացականչում է նա մի ուրիշ անգամ, ճնշում էք մեզ. ինչո՞վ էք հպարտանում, ի՞նչ էք արել... Իսկ մենք ապրել ենք, աշխատել ենք, տներ ենք շինել... ձեզ համար մեղքի մէջ ենք ընկել. այո, չատ մեղք ենք արել ձեզ համար...

Հէնց այդ պատճառով Բեզսեմենովը իրան երախտաւոր է համարում և սպահանջում է, որ զաւակները հպատակուեն իր կաւքին, ամեն ինչ անեն իր խորհրդով ու հաճութեամբ: Սակայն այդպիսի բռնակալական պահանջը աւելի ծանրացնում, աւելի վատացնում է Պետրի և Տատիանայի առանց այն էլ դառն կեանքը: Մտողների այդպիսի վերաբերմունքը և շրջապատող մթնոլորտը սարաչափ բռնի նման ճնշում են նրանց:

Տատիանան հասակն առած օրիորդ է և պարապում է մանկաբարժութեամբ։ Բայց այդ պարապմունքը նրան չի մխիթարում, նրա կեանքի դառնութիւնը չի մեղմացնում։ «Ա՛խ, որքան ձանձրալի է կեանքը», բացականչում է նա։ Իսկ երբ եղբայրը—Պետրը խորհուրդ է տալիս թողնել չը սիրած պաշտօնը—վարժուկութիւնը և գնալ սովորելու «Կանանց դասընթացներում», Տատիանան պատասխանում է.

—Ինձ ի՞նչ հարկաւոր են դասընթացները։ Ես ապրել, ապրել եմ ուզում և ոչ սովորել։ Բայց չը դիտեմ, չեմ երեւակայում, թէ ի՞նչ է նշանակում ապրել, թէ ես ի՞նչպէս կարող եմ ապրել...

Տաղտալի է կեանքը Բեզսեմենովի ընտանիքում։ Ի՞նչ է ներկայացնում այդ ընտանիքը։ Օտարօխիւ «Темное парство»-ի մի անկիւնը։ Նմանութիւնը շատ մօտ է...

Յոռետես է Տատիանայի հայեացքը կեանքի վրայ, յոռետես է նաեւ նրա եղբոր հայեացքը։ Պետրը համալսարանից արտաքսուած ուսանող է և ամենից բարձր դասում է անհատական ազատութիւնը։ Նա չի ուզում կատարել ոչ միայն ծնողների, այլ նաեւ հասարակութեան պահանջները։ Նա դառնացած բացականչում է.

—Հասարակութիւն—ահա իմ ուզած բառը։ Նա անհատից բարձր պահանջներ է անում, բայց հնարաւորութիւն չի տալիս նրանց ուղիղ ձանապարհով, առանց խոչընդոտների զարգացնելու։ Մտքը ամենից առաջ քաղաքացի պիտի լինի, բղաւում էր հասարակութիւնը իմ ընկերների բերանով։ Ես քաղաքացի էի... Բայց չեմ ուզում, պարտական չեմ հասարակութեան պահանջներին հպատակուելու։ Ես անհատ եմ։ Անհատը ազատ է...

Ահա այդպիսով քոյր ու եղբայր իրանց յոռետես հայեացքներով կարծես լրացնում են միմեանց և կաղմում մի ամբողջութիւն։ Կեանքից հրաժարուած, չըջապատողներից դառնացած ամբողջութիւն։—Այդ երկուսի հոգեկան աշխարհն էլ այնքան մոռյլ է, այնքան սեւ, որ իրան զդացնել է տալիս ամեն մի քայլափոխում, ամեն մի դէպքում։ Այսպէս, օրինակ, Տատիանային թատրոն են հրաւիրում, բայց նա փոխանակ հրաւերն ընդունելու, դառնացած պատասխանում է.

—Թատրոնն ինձ զգուցել է և ինձ չարացնում, գրգռում են այդ բոլոր դրամաները—լաց ու հառաչանքներով։ Այդ բոլորն էլ ճիշտ չէ։ Կեանքը մարդկանց կոտորատում է առանց ձայնի, առանց աղմուկի ու արցունքի, աննկատելի կերպով...

—Դրամաներ են խաղում սիրոյ տանջանքների մասին, քրոջ խօսքը լրացնում է Պետրը, բայց ոչ ոք չի տեսնում

այն դրամաները, որոնք հալ ու մաշ են անում՝ շուտով եմս
և ապարտաւոր եմ» գաղափարների մէջ տեղը կանգնած մար-
դու հոգին:

Այդ մարդկանցից է ինքը Պետրը և նրա քոյրը՝ Տատիա-
նան. նրանք երկուսն էլ շուտով են» յագուրդ տալ իրանցներ-
քին՝ անհատական պահանջներին, բայց ծնողներն ու շրջապա-
տող կեանքը շարունակ կանգնում են այդ ցանկութեան դէմ և
միշտ կրկնում՝ «Պարտաւոր էք»...

Սակայն բոլոր գործող անձինքն էլ այդպիսի տրաժիկ
դրութեան մէջ չեն. Նրանց մէջ կան այնպիսիները, որոնք կեն-
սուրախ են և հաւատացող, որոնք գործում են և հաւատում,
թէ կեանքը պիտի լարեփոխուի, թէ մարդիկ վերջ ի վերջոյ
պիտի հասնեն իրանց տենչալի նպատակին: Դրանց թուին են
պատկանում Բեզսեմնովի սանը՝ Նիլը, այրի Նլինան կրիւցո-
վան, վարժուհի Յուստանան և այլն: Դրանք հաւաքւում են
միասին, ներկայացումներ են սարքում բանուորների ու զի-
նուորների համար—աշխատում են ու հաւատում...

Բոլոր գործող անձերից ամենակատարեալն ու բնորոշը
երգիչ Տերենտիլն է. նա Գորկիի սիրած թափառաշրջիկների—
բոսնակների տիպերից է. նա հարբեցող է, բայց երբեք չի ճնշ-
ւում դրանից. «Ինձ փչացնում է ոչ թէ օդին, այլ իմ ոյժը, ա-
սում է նա: Աւելորդ ոյժ—անա իմ կորուստը: Այժմ հարկաւոր
է ոչ թէ ոյժ, այլ ճարպիկութիւն, խորամանկութիւն, օձի ճկու-
նութիւն»... Նա հարբում է, որովհետեւ «Աւելի յարմար է, ա-
ւելի հանգիստ է լինել հարբեցող, թափառաշրջիկ, քան թէ պա-
հեցող, ազնիւ ու գործնական մարդ»: Ամբողջ դրամայի ըն-
թացքում նա անհոգ կերպով մերթ սրախօտում է, մերթ փիլի-
սոփայութիւն անում—և միշտ էլ իր տեղումն է, իր դերումը...

Այդքանը դրամայի տիպերի մասին: Դառնանք այժմ նրա
կողմնակիցին, գործողութեանը, որը այնքան էլ բարդ չէ: Բեզ-
սեմնովի աղջիկը—Տատիանան սիրում է մեքլինտալար Նիլին,
բայց առանց փոխադարձ սէր ստանալու կենսամաշ էր Տատիա-
նան, իսկ Նիլը ուժով ու եռանդով լցուած, Յուսաբեկ ու ջախ-
ջախուած էր Տատիանան, իսկ Նիլը վառ յոյսերով, գործելու
տենչով տողորուած: Պարզ է ուրեմն, որ նա չէր կարող սիրել
Տատիանային: Ժամանակը սահում է առաջ ու առաջ, իսկ սի-
րող սիրտը միշտ սպասում է, միշտ յոյսեր է տածում: Վերջա-
պէս բացւում է դառն իրականութիւնը և մի րոպեում ջարդ ու
փշուր անում այդ բոլոր տենչերն ու յոյսերը: Մի գեղեցիկ օր
իմացւում է, որ Նիլը սիրում է դերձակուհի Պօլիային և արդէն
վճռել է ամուսնանալ նրա հետ: Ի՞նչ պէտք է անէր թշուառ

Տատիանան Միայն սիրոյ կայծն էր, որ կեանք էր տալիս նրան, միայն աղօտ յուսոյ թելն էր, որ կապել էր այդ կեանքը այս աշխարհի հետ և ահա յանկարծ կտրուեց այդ թելը, բաց անելով յուսահատութեան անծայր, անյատակ վիճը։ Տատիանան գորում է նրա մէջ, նա թոյն է ընդունում, որպէս զի վերջ դնէ իր չարքաշ կեանքին։

Սկսում է աղմուկ, իրարանցում Բեզսեմնօվի ընտանիքում։ Շտապում են բժշկի յետեւից։ Լալիս, ողբում են Տատիանայի ծնողները, անհանգստանում է նրա եղբայրը։ Հաւաքւում են ծանօթներն ու ընկերները։ Բոլորն էլ ջաւում են, բոլորն էլ հետաքրքրւում են, թէ ինչը պիտի ստիպէր այդ քայն անելու... Բարեբաղդաբար բժշկական օգնութիւնը նորից առողջացնում է Տատիանային։

Առողջանում է նա, բայց կատարուած փաստը խորը հետքեր է թողնում և մի տեսակ նախաբան դառնում սպագայ փոթորիկների համար։ Բեզսեմնօվը ամեն մի քայլափոխում ցոյց է տալիս իր ատելութիւնն ու թշնամանքը դէպի Նիլը և Պօլիան։ Ինչպէս, իր սանը, իր մեծացրած Նիլը, համարձակում է ամուսնանալ առանց իր խորհուրդն ու թոյլտուութիւնն ստանալու։ Ինչպէս, իր տանը կար անող Պօլիան յանդգնում է խել Տատիանայի սիրած փեսայացուին... Դա կատարեալ դաւաճանութիւն է նրա կարծիքով, կատարեալ անամօթութիւն...։

Բայց Նիլը երկար չի տանում Բեզսեմնօվի կշտամբանքները։ Նա յայտնում է, որ ինքը ազատ անհատ է և ոչ ստրուկ, որ ոչ ոք իրաւունք չունի նրա վրայ բռնանալու... Նւ այդ աղմկալի ընդհարումից յետոյ ընդմիշտ հեռանում է Բեզսեմնօվի տանից։ Վերջինիս կատաղութեան չափ չը կայ. «Վերադարձէք, գլուխ տուէք»... Կանչում է նա հեռացող Նիլի և Պօլիայի յետեւից, բայց անօգուտ...։

Հեռանում է ղոյգը, իսկ Բեզսեմնօվը դեռ չարունակում է անզուսպ զայրոյթի արտայայտութիւնը։ Տատիանան և Պեօտը աշխատում են հանգստացնել, սակայն նրանց գլխին էլ թափւում է կշտամբանքների հեղեղը։ Միջամտում է այրի Ելենա Իւանօվնան, բայց այդ միջամտութիւնը իւղի նման սաստկացնում է կարաղութեան բոցը։ Բեզսեմնօվը վաղուց արդէն աւտում էր, որովհետեւ նկատում էր, որ Պեօտը սիրում է նրան, քաշ է գալիս նրա յետեւից։ Նա երբեք չէր հաշտւում այն մտքի հետ, թէ իր որդին կարող է ամուսնանալ մի այդպիսի կնոջ հետ, որ ոչ մեծ բաժինը ունէր և ոչ էլ յայտնի անուն։ Նա իր կնոջ Ակուլինայի հետ միասին ամեն կերպ աշխատում էր հեռու պահել Պեօտին Ելենայի ազդեցութիւնից, բայց ա-

հագուտու Ատեղութեան մաղձը օրէցօր հաւաքուում էր նրա սըր-
տում և մի յարմար բոպէի էր սպասում, որ դուրս թափուի:
Ահա և այդ բոպէն Նիլի և Պօլիայի հեռանալուց յետոյ, երբ
Բեզսեմենովը դեռ շարունակում էր իր յանդիմանութիւնները,
երբ դեռ կատաղած էր բողբոջ վրայ, Ելենան միջամտում է և
իր մօտ է հրաւիրում Պետրին ու Տատիանային: Բեզսեմենովը
արգելում է:

—Էտեղութիւն, հայր, պատասխանում է Պետրը, ես երեխայ չեմ,
չը գնամ, եթէ ուզենամ:

Բեզսեմենով. —Չե՛ս գնայ...

Ելենա. —Թոյլ տուէ՛ք, Վասիլի Վասիլիւվիչ...

Բեզսեմենով. —Ո՛ր, այժմ արդէն դուք թոյլ տուէ՛ք, թէեւ դուք
դարգացած մարդիկ էք, թէեւ դուք կորցրել էք ձեր խիղճն ու ո՛չ ոքի
չէք յարգում...

Ցափանա. —(հեծկտալով) Հայրի՛կ, բաւական է...

Բեզսեմենով. —Լսի՛ր, երբ դու քո բաղդի տէրը չես, լսի՛ր...
սպասի՛ր, ո՛ր... Պէտք է ինձ լսել: Արե՛ք ինձ այդ բարութիւնը—լսեցէ՛ք:
Թողէ՛ք, որ հասկանամ թէ ինչու՞ն է բանը: Բողբոջ հեռանում են, առանց
բացատրելու իրանց մտադրութիւնները, այնպէս, վիրաւորական է և ա-
մօթալի: Դու ո՞ր կարող ես գնալ, Պետր: Դու... դու ի՞նչ ես: Ի՞նչպէ՛ս
կարող ես ապրել... Ի՞նչ պէտք է անես... Դու երրորդասորդ ես, դու դեռ
յիմար ես... Յիսուն ութ տարի ես աշխատանքի մէջ ջղերս եմ մաշել
դասակներէս համար...

Պետր. —Այդ ես լսել եմ, հայր: Ես հարիւր անգամ...

Բեզսեմենով. —Սպասի՛ր, լսի՛ր...

Ակուլինա Բլանովնա. —Ա՛խ, Պետեա, Պետեա...

Ցափանա. —Մայրի՛կ, դուք ոչինչ չէք հասկանում...

Բեզսեմենով. —Լսի՛ր: Ի՞նչպիսի խօսքեր ես ասում...

Պետր. —Հայր, դու տանջում ես ինձ: Քեզ ի՞նչ է հարկաւոր, ի՞նչ
ես ուզում:

Ակուլինա Բլանովնա (յ ա ն կ ա Ր ծ բ ա Ր Ճ Ր). —Ո՛ր, սպա-
սի՛ր. ես էլ սիրտ ունեմ, ես էլ ձայն ունեմ: Որդեա՛կ, ի՞նչ ես ասում,
ի՞նչ ես մտածել, ո՛ւմ ես հարցրել:

Ցափանա. —Սա սարսափելի է, սա մի՛ բթացած սղոց է... (սօրը)
դուք պատահաւորաբար էք մարդու հոգին ու մարմինը...

Ակուլինա Բլանովնա. —Մայրը՝ սղո՛ց է: Մայրը:

Բեզսեմենով. —Պառա՛ւ, սպասի՛ր: Ահա նա... Թող խօսի:

Ելենա (Պ ե տ Ր ի ն). —Նո՛ւ, բաւական է. ես այլ եւս չեմ կա-
րող, ես գնում եմ...

Պետր. —Վանգնեցէ՛ք, ի տէր Աստուծոյ: Իսկոյն ամեն ինչ կը պար-
զուի...

Ելենա. —Ո՛ր, սա խելագարների տուն է... Սա...

Բեզսեմենով. —Դուք, պարո՛ն, դուք...

Ցափանա. —Արդեօք վերջանալու է այս ամենը: Պետր, հեռա-
ցի՛ր...

Պետր, (բ ղ աւելո՞ւմ). —Հայր... Նայի՛ր: Մայր... Ահա սա իմ
հարսնացուն է:

Քեզսեմեցիդ.—Շնորհակալութիւն, որդի, ուրախալի լուրի համար։
Ահաւորիւն Իւսեցիդ.—Կորած եւ դու, Պետկա, միթէ նա քո
 զոյգն էր...

Քեզսեմեցիդ (Եւսեցիդ)։—Ձեզ էլ շնորհակալութիւն, տի-
 կիւն... Այժմ, կը նշանակէ, նա կորած է։ Նրան հարկաւոր էր սովորել,
 իսկ այժմ... Քէն եւս այդ գգում էի... Շնորհատրում եմ ձեր որբը...
Պետկա, քեզ համար այլ եւս օրհնութիւն չը կայ։ Իսկ դու, դու... որսա-
 ցի՛ր, գողացա՛ր։ Ատո՛ւ... Կեղ...

Պետր.—Հայր, դու... անմիտ ես...

Եւսեցի.—Ո՛չ, սպասեցէք։ Այո՛, այդ ճշմարիտ է։ Այո՛, ես ինքս
 խլեցի նրան ձեր ձեռքից։ Ես ինքս առաջարկեցի ամուսնանալ ինձ հետ։
 Լսե՛մ եք... Ես ինքս խլեցի նրան, որովհետեւ ցատում էի նրա վրայ։
 Դուք նրան տանջում էիք... Դուք մի տեսակ ժանկ էք և ոչ մարդիկ։ Ձեր
 ռէրը կորուստ է նրա համար։ Դուք կարծում էք—օ՛հ եւս այդ գիտեմ,
 դուք կարծում էք, թէ ես այդ ինձ համար արի՛... Նո՛ւ, կարծեցէք...
 օ՛խ, ի՛նչպէս ատում եմ ձեզ...

Տասիւս.—Լինա, Լինա, ի՞նչ եւս անում...

Պետր.—Եւսե՛մ, գնանք...

Եւսեցի.—Իմացած եղէք, կարելի է եւս դեռ չը պահուեմ նրա
 հետ։ Դուք ուրա՛խ էք, այո՛ւ։ Օ՛հ, դա շատ կարելի է։ Դուք ժամանակից
 առաջ մի վարեանաք։ Ես այնպէս կապրեմ նրա հետ... Առանց պակի,
 բայց նրան այլ եւս չեմ տալ ձեզ։ Ձեմ տա՛յ։ Դուք այլ եւս չէք տանջի
 նրան, ո՛չ։ Եւ նա չի գալ ձեզ մօտ երբէք։ Երբէ՛ք, երբէ՛ք։

Այդ փոթորկալի տեսարանից յետոյ հեռանում են Պետրն
 Եւսեցին, Բեզսեմեցիդը շարունակում է իր կատաղութիւնը,
 թշուառ մայրը—Ահաւորիւնն արտասուէնքն աչքերին մրմնջում է.

—Բոլորը թողին մեզ. հեռացան մեզանից... Ինչն էր պատճառը...

—Եւսեցին էր պատճառը—այդ միեւնոյն հարցով դիմում է զարմացած
 ականատեսը—Պերլեխինը Տատիւնային։

—Ի՞նչն էր պատճառը, ասում է նա, որ նրանք փախան, հեռացան,
 իսկ սրանք լաց են լինում։ Տարօրինակ մարդիկ...

Ահա այդ բառերով էլ եզրափակում է հեղինակն իր զրա-
 ման։ Բայց միթէ, իսկապէս, տարօրինակ էին նրա հերոսները։
 Ո՛չ, նրանք տիպիկ ներկայացուցիչներ են ժամանակակից հա-
 սարակութեան որոշ դասակարգի։ Նրանց վարմունքն էլ ընա-
 կան հետեւանք էր չըջապատող պայմանների։ Այդ միեւնոյն
 պայմաններն էին, որ ճնշելով անհատական ազատութիւնը,
 Զուգերմանի հերոսուհուն—Մագդալին դուրս մղեցին հայրենա-
 կան տանից (Heimat)։ Դրանք էին, որ գոտութեան սերմ ցա-
 նեցին բոլիշ Ծօլցի ընտանիքում (Das Friedensfest), որ թշուա-
 ռացրին Կրամերին (Michael Kramer), Կոիւ հնի և նորի մէջ։
 Մաքառումն անհատական ձգտումների և ընտանեկան ու հա-
 սարակական պահանջների—ահա դա է այդ զրամանների անկիւ-
 նաքարը։ Միեւնոյն երգը՝ զանազան ելեւեջներով, զանազան
 վարիացիաներով։

Գալով „Мѣщане“-ի բեմական արժանիքներին, պէտք է նկատել, որ նա զուրկ է այսպէս ասած «դրամատիզմից», զուրկ է գործողութիւնից: Նրա հերոսները բեզօնեօրէն են, որ աւելի շատ խօսում են, քան թէ գործում: Ամբողջ դրաման աֆորիզմների ժողովածու է, մի շարք տեսարանների հաւաքածու, որոնք տեղ-տեղ նոյն-իսկ տաղտկալի են դառնում: Բայց չը նայելով այդ թերութիւններին, դրաման իր վրայ կրում է Գորկիի տաղանդաւոր գրչի դրոշմը և ունի լեզուի գունաւորութիւն, ոյժ և մի առանձին գրաւչութիւն: Բացի դրանից նա հետաքրքրաշարժ է իբրեւ աշխարհաշակ հեղինակի առաջին դրամատիկական երկը:

Ե. ԹՈՓՉԵԱՆ